ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անտոնյան.

Ի պատասխան Ձեր 11.12.2019թ. հ.01/485 գրության՝ Նոր Նորք վարչական շրջանի Գայի արձանի մոտ գտնվող շինությունների և սրճարանների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին, տեղեկացվում է.

- Երևանի քաղաքապետի 25.07.2003թ. հ.1475-Ա որոշմամբ՝ 278.6քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվել է Արսեն Տիրատուրյանին (2516-2003 հատակագիծ),
- Երևանի քաղաքապետի 02.05.2003թ. հ.964-Ա որոշմամբ՝ 1380քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվել է «Լարնակա» ՍՊԸ-ին (886-2003 հատակագիծ), որի դիմումի հիման վրա 12.10.2006թ. ընդունվել է Երևանի քաղաքապետի հ.1627-Ա որոշումը, համաձայն որի Գայի պողոտայի շատրվաններին հարող տարածքում «Լարնակա» ՍՊԸ-ին տրամադրված 1380.0քմ մակերեսով հողամասը բաժանվել է 782.7քմ, 400.0քմ, 100.0քմ, 44.0քմ և 53.3քմ մակերեսներով՝ հինգ առանձին գույքային միավորների, որոնք տրամադրվել են՝ «Լարնակա» ՍՊԸ-ին՝ 782.7քմ (2714-2006 հատակագիծ), «Գրիաչ» ՍՊԸ-ին՝ 400.0քմ (2712-2006, 1001-2010 և 1000-2010 հատակագծեր), իսկ 100.0քմ (2713-2006 հատակագիծ)՝ «Անկոլո» ՍՊԸ-ին:
- Երևանի քաղաքապետի 03.10.2014թ. հ.3788-Ա որոշմամբ՝ 93.8քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրվել է Արմեն Արսենյանին (1771-2014 հատակագիծ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ